ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆԸ ՄԵԶԱՆՈՒՄ

ԱՆՈՒՇ. ՔԱԼԱՆԹԱՐԻ

(Շարունակութիւն և վերջ [1])

II

Ո՞րչափ մուտք ունի պանդխտող գիւղացին իւր տնտեսութիւնից և որչափ ծախք է նա անում։ Ո՞րն է մեծ՝ մուտքը թէ ծախքը։ Ի՞նչքան է դիւղացին լետ գցում սև օրւայ համար կամ որքանի՞ նա պակասութիւն է զգում ամեն տարի։ Ահա կէտեր, որոնք նախապէս պէտք է պարզւած լինեն՝ պանդխտութեան խնդիրը հասկանալու համար։

Օգտւելով եղած հետազօտութիւններից, իբրև օրինակ, առաջ ենք բերում պ. Տէր-Պետրոսեանցի արած հաշիւը Ալեքսանդրապոլ գաւառի մի քանի գիւղերի համար...

Պր. Տէր-Պետրոսեանցը առնում է գիտմամբ միատեսակ պայմաններով աղքատ 9 գիւղ։ Ուրիշ գաւառներում այդ աղքատութիւնը գուցէ հաւասարակշռւի, այնտեղի հողի պակաս պտղաբերութեամբ, քան Շիրակինն է։ Մենք այդ հաշիւը առաջ ենք բերում մի հասկացողութիւն տալու համար ընթերցողին այդ տեսակ հաշիւների մասին, թողնելով իրան՝ ցանկացած ժամանակը՝ հաշիւներ անել զանազան մասների և հողերի համար, փոփոխելով հողի քանակութիւնը կամ գէպի շատը՝ կամ դէպի քիչը...

«Գիւղացու տարեկան եկամուտը» հաշւելու համար հարկաւոր է՝ նկատի առնել վարելահողի բաժնի և առհասարակ ամեն տեսակ հողաբաժնի չափը, երկու սեռին պատկանող անհատների թիւը, հողի պտղաբերութեան միջին ոյժը և ստացած նիւթերի գինը։ Հողաբաժինը որոշելու համար կը օգտւենք նոր պաշտոնական տեղեկութիւններից, որ գտնում ենք Զելինսկու հետազոտութեան մէջ և որոնցից կը փիշենք միայն մեզ հարկաւոր թւերը։

---

[1]) Տե՛ս «Մուրճ» № 11։

Գիւղերէ անունը	Բնակիչ—երկու սեռի Տղամարդ.	Կինարմար	Հողի քանակութ. դեսեատին Վարելահ. և խոտհար.	Արօտատեղ
Ագին	423	396	682,67	300,00
Դաւչան-դշլաղ . .	515	445	940,60	150,00
Դահարլու	317	277	802,90	չունի
Ղազարապատ . .	226	212	537,17	370,83
Ղարաքիլ. (փոքր.)	1457	1320	3447,47	500,00
Կեկաչ (Ղեզաշ) .	166	168	327,67	180,00
Կեալալի.	149	144	816,00	80,00
Սանվերդի. . . .	455	445	1036,56	250,00
Զրփլի	281	252	679,19	292,00
բոլորը . . .	3989	3665	9270,29	2122,83

Այս աղիւսակից երևում է, որ վերոյիշեալ 9 գիւղի 7654 երկու սեռի պատկանող անհատների վիրաւ գալիս է 9270,29 դես. վարուցանքի և խոտահարքի հող և 2122,83 դես. արօտատեղ։ Բայց որովհետև մեր լիշած տեղում ղուտ, մշտական, մարգաղետին (խոտահարք) ամենևին չը կայ, ուրեմն բոլորը՝ 8270,29 դես. հողը՝ կը հաշուենք վարելահող։ Այն ժամանակ երկու սեռի պատկանող ամեն մի անհատի վերաւ գալիս է $\frac{9270,29}{7654}=1,21$ դես. վարուցանքի և $\frac{2122,83}{7654}=0,270$ դես. արօտահող։ Եւ որովհետև այդքան աննշան արօտատեղը չի կարող աչքի ընկնող օգուտ տալ, մենք նորան մուտքի հաշուի մէջ չենք մտցնիլ.

Վարուցանքի հաշուից պէտք է դուրս գցել նորա այն մասը, որը խճով է ծածկուած։ Եթէ բոլոր քարերը հաւաքենք թումբերի (որ այս կողմերում սովորական բան էլ է) և մի արտում հաշուենք 40 թումբ և ամեն մի թումբը 1 քառակ. սաժէն. այն ժամանակ 1,21 դես. տարածութեան վերաւ կը լինի 1,21×40=48,4 քառ. սաժէն. քարակոյտով բռնուած տեղ։ Բացի այդ՝ պ. Տէր-Պետրոսեանը անում է և ուրիշ հաշիւներ և վերջնականապէս հանելով 0,75 դես. հող, ներկայացնում է իբրև մշակելի հող, իբրև վարելահող՝ 1,13 դեսեատին։

Այս կողմերում ցանում են ցորեն ու գարի և աւելի առաջինից քան երկրորդից [1]։ Որովհետև Շիրակի (Շորագեալի) մասին տեղեկութիւններ չը կան, պ. Տէր-Պետրոսեանը օգտւում է Ղարսի նահանգի տեղեկութիւններից, որոնցից երևում է, որ ցորենի և գարու քանակութեան լարա-

---

[1]) Մենք ամբողջապէս չենք բերում Տէր-Պետրոսեանի յօդուածը, առնում ենք միայն էական մասը, բաց թողնելով այն, ինչ կարող է երկարացնել մեր խօսքը, առանց վնասելու յօդուածի իմաստին...

բերութիւնը 13:10 է։ Բայց որպէս զի աւելի մօտ լինի իրականութեան՝ նա ընդունում է 3:1 յարաբերութիւնը, որովհետև առհասարակ 2 տարի ցորեն են ցանում և մի տարի գարի նոյն արտում և յետոյ հողը հանգստացնում։ «Առաջնորդուելով 3:1 յարաբերութեամբ՝ այն կունենանք, որ 1,13 դեսեատինից 0,85 դես. ցորէն է ցանւում և 0,28 դես. գարի։

Ղարսի նահանգում 1883 թուին ցանուած է 126,000 փութ ցորէն և 9700 փութ գարի. հնձուած է 572000 փութ ցորէն և 492,000 փութ գարի, ցորէնի բերքը մէկին 4,5 է, իսկ գարունը 5։ Նոյնը Տէր-Պետրոսեանցը ընդունում է Շիրակի մասին, որովհետև երկու տեղերումն էլ երկրագործութիւնը նոյն ձևերով է կատարւում... Ինչ վերաբերում է մի դեսեատինում ցանելիք ցորենի կամ գարու քանակութեան, մենք ընդունում ենք ամենաշատը 13 փութ ցորէն և 15 փութ գարի։

Ցորէնի փութը, միջին բերքի տարին, արժէ 55 կոպէկ, իսկ գարու փութը 25 կոպէկ։

Այս բոլորից յետոյ հաշւենք մի հոգու տարեկան արդիւնքը։ Ցորենացան 0,85 դես վարելահողին պէտք է՝ հաշւելով ամեն մի դես, 13 փութ ցորեն՝ բոլորը 0,85×13=11,05 փութ սերմնացուեն. որի բերքը եթէ 4,5 ընդունենք, կ'ունենանք ընդամենը ցորեն 4,5×11,05=40,73 փութ։ Եւ որովհետև ցորենի փութը արժէ 55 կոպ. ուստի 0,85 դես. հողից կը ստանանք 55×49,73=27 ր. 35 կոպ։ Նոյնպէս 0,28 գարու վարելահողից, հաշւելով դես. 15 փութ. կունենանք 15×0,28=4,2 փութ սերմնագարի որի բերքը հաշւելով մէկը—5, կը ստանանք 4,2×5=21 փութ գարի, որ 25 կոպէկով փութը՝ կ'անէ 25×21=5 ր. 25 կոպ.։ Եւ այսպէս՝ երկու բերքերից մի հոգին տարեկան աշխատանք ունի 27 ր. 35 կ.+5 ր. 25 կ.=32 ր. 60 կոպ.՝ առանց գարմանը հաշւելու։

«Բայց եթէ աչքի առաջ ունենանք այն հանգամանքը, որ հողը հանգստանում է ամեն 3 տարին մէկ և համարենք, որ խոզանից ստացւում է 5 րուբլու խոտ—այն ժամանակ գիւղացու տարեկան արդիւնքը կը փչանայ մինչև $\frac{32.60\times3+5}{4}$=25 ր. 70 կոպ. (եթէ արտը մի տարի մնայ, եբր խոզան հանգստանալու)։»

Գլխաւոր պարապմունքից անցնենք երկրորդականին՝ տաւարապահութեան։ Տաւարապահութիւնը այստեղ առանձին արդիւնաբերութեան ճիւղ չէ կազմում։ Այստեղ տաւարը պահում են երկրագործութեան և տան պիտոյքների համար։ Տաւարից եկածը հազիւ հազ ներքին պահանջը կարողանում է լրացնել։

Որովհետև 1008 ծուխի համար գիւղում կայ 3163 գլուխ լծան ապրանք, ուրեմն մի ծխի վերայ կը գայ $\frac{1008}{3164}$=3,14 եզ և գոմէշ։ Իսկ որպէս զի գիւղացիները կարիք չունենան վարձովի տաւարով գործելու, պէտք է, որ

ամեն մի ծուխ ունենալ առնուազը 2 զուգ, կամ 4 հատ լծան եզ, մինչդեռ Զելինսկու տված թվերից երևում է, որ եղածը մեր նշանակած minimum-ից (ամենաքիչից) էլ պակաս է. (minimum-ը 4 է, եղածը—3,14)։ Այս մեր փշած գիւղերում կայ՝9308 գլուխ խոշոր տաւար, 14007 ոչխար և այծ, 313 ձի, 509 էշ.

«Թէպէտ այդ փոքր քանակութիւնը վկայում է, որ այստեղ տաւարապահութիւնը. իբր գիւղատնտեսութեան մի ճիւղ, բացակայում է, բայց և այնպէս, այդ եղած քանակութիւնը մի չայտնի օգուտ է տալիս գիւղացուն, ըստ որում՝ ի հարկէ շահաւէտութեան կողմից՝ կաթնատու տաւարը աւելի նշանակութիւն ունի... Եթէ ընդունենք բոլոր տաւարի 25°/₀-ը կաթնատու, կունենանք 9308:4=2327 կաթնատու կով։ Ամեն մի կովը տարեկան կը տայ 1 փութ և 30 ֆունթ իւղ և 1 փութ պանիր։ Իւղի փութը արժէ 8 ր. իսկ պանրինը 1 ր. 20 կոպ. Ուրեմն մի կովը կ'տայ տարեկան մուտք 70×20+120=15 ր. 20 կոպ. մի գիւղացի ունի մեծ տաւարից այխատանք $\frac{1520\times2326}{7654}$ կոպ.=4 ր. 62 կոպ.[1])...

Ինչպէս, որ իւղը ստանալուց յետոյ մնացած թանի գինը ի նկատի չի առնւած, այնպէս էլ ի նկատի չենք ունենալ տաւարի պահելու ծախքը...

Հաշւենք ոչխարից ստանալիք մուտքը։

Զելինսկու հաշւով՝ 100 ոչխարից տարեկան գալիս է 80 ր. 25 կ. ուրեմն մէկից մուտք[2])—80¼ կոպ.։ Միջին գիւղացին ունի $\frac{14007}{7654}$[3]) ոչխար, ուստի տարեկան ոչխարապահութիւնից նա.կը ստանալ մուտք. $\frac{14007}{7654}\times80\frac{1}{4}$=1,47 կ. կամ տաւարից և ոչխարից զուտ աշխատանք 4 բուբլի 62 կոպ.+1 ր. 47 կ.=6 ր. 09 կոպ. Ուրեմն գիւղացին երկրագործութիւնից և տաւար պահելուց ընդամենը ստանում է 25,70+6,09=31 ր. 79 կոպ.։

«Այդ 31,79 կոպէկով այստեղի գիւղացին ապրում է ամբողջ տարին, մախելով դորանից կերակրի, հագուստի, հարկերի և հասարակական ու տան ծախքերի համար։

Այժմ նշանակենք մի գիւղացու ծախքերի տարեկան minimum-ը (ամենաքիչը)։

«Սկսենք կերակրից[4])։ Հասակաւոր մարդու համար օրական հարկաւոր

---

[1]) 15 ր. 20 կ. մի ծուխի աշխատանքը։ 2327=կով 7654=այր և կին.

[2]) Մուտք=Валовой доходъ; աշխատանքը=чистый доходъ.

[3]) 14007—բոլոր ոչխարի և այծի քանակութիւնը։

[4]) Նորանց,որ հետաքրքրւում են այն բոլոր մանրամասնութիւններով,թէ ինչու պ. Տէր-Պետրոսեանը՝այս կերպ կամ այն կերպ է նայում կերակրանիւթերի վերաբերմամբ աշխատում ենք կարդալ նորա ամբողջ յոդւածը։ Մենք բաւականանում ենք նորա գրւածքի միայն մի մասը առաջ բերելով...

է այն տեսակ կերակուր, որ պարունակում լինի առնուազն $27^1/_2$ մխալ ճերմակուց (бѣлокъ)—13 մխալ իւղային մասներ և $1^1/_4$ օսլայական մասեր (углеводы)—ուրեմն տարեկան մի մարդու համար հարկաւոր է՝ 104,54 փունթ ճերմակուց, 49,43 ֆ. իւղ և 456,25 ֆ. օսլայանիւթ. «Մենք կարծում ենք, որ բոլոր ճերմակուցը և օսլայանիւթը ստանում է գիւղային ցորենի հացից, որը գործածականն է ալստեղ, իսկ իւղային մասնիկները ստանում է կովի և կտաւատի իւղից... «Որպէս զի 104,54 ֆունթ. ճերմակուց ունենանք, պիտի բանացնի՝ $\frac{100 \times 104,54}{12 \times 40} = 21,78$ փունթ. ցորեն՝—եթէ տեղական ցորենի մէջ ընդունենք 12% ճերմակուց. Բայց այս ճերմակուցի մի հինգերորդ մասը գտնուում է ցորենի թէփի մէջ, որը մնում է՝ առանց մարսելու. Այդ պակասող մասը, որ համապատասխանում է 4,36 փունթ. ցորենի, լրացնելու համար՝ մի մարդու համար հարկաւոր է տարեկան ցորենի պաշար՝ 21,78+4,36=26,14 փունթ.

Այդ 26,14 փունթ ցորենը պարունակում է մի մարդու հարկաւոր օսլայանիւթը, որովհետև ինչպէս լայանի է այդ նիւթից պինդ ցորենը պարունակում է մօտ 65%. Բացի օսլայանիւթերը այդքան ցորենի մէջ կայ և 15,68 ֆունթ իւղ (եթէ հաշուենք ցորենի մէջ 1,5% իւղային մասներ). Ուրեմն հարկաւոր 49,43 ֆունթ իւղից՝ 15,68 ֆունթը գիւղացին ստանում է ցորենից. իսկ մնացած 33,75 ֆունթը պէտք է ստանայ կովի և կտաւատի իւղից... Այդ 33,75 ֆունթից՝ 20,07 ֆունթը կովի իւղ է, իսկ 13,68-ը կտաւատի, հաշուելով ուտիս և պաս օրերը...

Բացի այդ՝ հաշուելով տարեկան ամեն մի մարդու վերայ մօտաւորապէս 1 փունթ աղ՝ կունենանք.

26,14 փունթ ցորեն, փունթը 60 կոպէկ	15 ր.	68 կոպէկ
20,07 ֆ. կովի իւղ, ֆ. 23 կոպ.	4 »	63 »
13,68 ֆ. կտաւատի, ֆ. 12 կոպ.	1 »	64 »
1 փունթ աղ, ...	»	30 »
կերակուրը բոլորը. . .	22 ր.	25 կոպէկ

Հագուստը մի տարեայ.

1 չուխա բրդի.	2 ր.	50 կոպէկ
2 կտաւէ շապիկ.	— »	80 »
1 չթի արխալուղ	1 »	50 »
1 չալի շալւար.	— »	80 »
1 կտաւի »	— »	40 »
4 զոյգ բրդի գուլպա.	— »	40 »
4 » արէխ	— »	80 »
1 » թոզլուխ	— »	20 »
1 բրդի դտակ, երկու տարին մէկը՝ հատը 60 կոպ.	— »	30 »
բոլոր հագուստը	7 ր.	70 կոպէկ

Մեր առած 9 գիւղը տալիս են 13300 ր. 39 կոպ. թագաւորական և հասարակական ծախքեր. ամեն մէկը՝ $\frac{13300 \text{ ր. } 39 \text{ կ.}}{7654}$=1 ր. 74 կոպ.

Ս ե ր մ. 0,85 դեսեատին հողը ցանելու համար՝ հաշուելով. 13-ական փութ՝ հարկաւոր է 11,05 փութ սերմ. որ 55-ական կոպ. փութը. կ'ածենայ . . . . . 6 ր. 08 կոպէկ

0,28 դես. 15-ական փութ ցանելու հարկաւոր է 1,2 փ., որ 25-ական կոպէկով. կ'ածենայ . . 1 » 05 »

26,14 փութ ցորէնը աղալու համար, պէտք է տրուի ցորէնի $^1/_{20}$ մասը=1,31 փութ։ Աղալու ժամանակ հատիկները փչանալուց և ալիւրի փոշու ձեւով պակասելուց, հաշուելով 2%՝ ընդամենը փչանում է 0,52 փութ. ուրեմն ցորենի աղալը արժէ 1,83 փ., որ 55 կ. կանի 1 » 01 »

Տարեկան լոյս. և ճրագ . . . . . — » 50 »

Սապոն 5 ֆ., 15-ական կոպ. . . . . — » 75 »

Պղնձէ ամանի մի կլէկելը . . . . . — » 10 »

Երկրագործիքների կարկատանը և նորոգելը . . 2 » 50 »

Հոլիին. . . . . — » 50 »

Տաւարի պալտելը . . . . . — » 60 »

Բոլորը. . . . . 13 ր. 09 կոպէկ

Մենք ի նկատի չենք առնում տաւարի պահելու ծախքը, ենթադրելով, որ նա այնքան կը լինի, ինչքանի են դարմանի և այլ մթերքների արդիւնքը, որը նոյնպէս չենք հաշուել, թէպէտ և տաւարի պահելը աւելի թանկ է նստում, նամանաւանդ անբերրի տարիները։ Ապիսով մի գիւղացի տարեկան ծախսում է՝ կերակրի, շորի, հասարակական և արքունական և այլ պէտքերի. 22 ր. 25 կ.+7 ր. 70 կ.+1 44 կ.+13 ր. 09 կ.=44 ր. 78 կ.

Իսկ մուտք ունի. . . . . 31 » 73 »

Ծախքը մուտքից աւելի է . . . . . 12 ր. 99 կ.

III

Գիւղացու տնտեսութեան մէջ գոյացած 12 ր. 99 կոպէկի պակասը որ պ. Գ. Տէր-Պետրոսեանցը դուրս է բերում, ի հարկ է, պարզ ապացուցանում է, որ գիւղացու ձեռքում եղած հողը չէ կարողանում ապահովել գիւղացու ապրուստը, ուրիշ խօսքով որ գիւղացին զբաղում է սակաւահողութիւն...

Այդ 12 ր. 99 կոպէկը՝ կամ պարզութեան համար՝ 13 բուբլին՝ գիւղացին պէտք է մի տեղից ճարի։ Նա պէտք է այդ պակասը լրացնի՝ կամ

աւելի վատ ապրելով կամ կողմնակի աշխատանք ճարելով և կամ թէ այն և թէ միւսը միասին գործադրելով։ Պ. Տէր-Պետրոսեանցի ասելով գիւղացիները վաշխառուներից փող են առնում 20—50 տոկոսով. մեզ են գալիս պատառոտած, բոբիկ։ Համարեա բոլոր գիւղացիները պարքի մէջ են և իրանց որդիներին տալիս են հացրփոր ծառայելու։ Այսպիսով սկիզբն է դնում պանդխտութեանը, չնորհիւ այն բանի, որ աշխատող ձեռքերը, ուրեմն միևնոյն ժամանակ և սպառողները, աւելի շատ են, քան որչափ պահանջում է եղած գիւղական հողը։

Եթէ նոյն քանակութեան հողի վերայ աւելի քիչ մարդիկ ապրում լինէին, այն ժամանակ հողը կարող կը լիներ նորանց ապահովել, իսկ այդ հողի կերակրելու ուժից օգտուող բերանները պիտի իրանց համար. ներկայ զրութիւնը աչքի առաջ ունենալով. կողմնակի աղբիւրների դիմեն եթէ չեն ուզում ենթարկուել անկուշտ մնալուն և քաղցածութեան։ Ուրեմն՝ պարզ է, որ մեր պանդխտութեան խնդրի հիմքումն է—ուտելու, ապրելու, հացի խնդիրը, այլ ոչ թէ միայն թափառելու սովորութիւնը, չլանալը, կամ գիւղից քաղաք տեղափոխուելու հրապոյրը։

Որպէս զի գիւղացու ծախքը և մուտքը հաւասարուեն, հարկաւոր է որ նա էլի ունենայ 12 ր. 99 կոպէկ։ Բանի որ հողի քանակութիւնը չի փոխուած և ուրիշ աղբիւրների էլ դեռ չենք դիմում, պէտք է, որ գիւղացիների թիւը պակսի մի չափով։ Ցաւոնի է, որ մեր գիւղերում, ժողովուրդը ոչ թէ չէ պակասում, այլ և մեծ տոկոսով բազմանում է։ Գուցէ ժամանակով՝ եթէ ժողովուրդը ապահովելու միջոցներ չառնեն՝ մեր տնտեսական կեանքի զարդանալով, առաջ գալ պակների և ծնունդների պակասելը և մահացութեան շատանալը, բայց այժմ գիւղացիների թիւը՝ ինչպէս ասացինք՝ չէ քչանում, այլ սաստիկ աւելանում է և աւելորդ ոյժերը ելք են որոնում պանդխտութեան մէջ։ Գիւղացիների թիւը, աշխատաւորների թիւը այնքան աւելի է պահանջից, որ բոլորովին հասկանալի է դառնում թէ ինչու գիւղացիների մի պանդխտական մեծ չարժում է նկատւում դէպի քաղաքները (առաւել Բագու) գարնանը, այսինքն այն ժամանակ՝ երբ մի կարճ ժամանակից յետոյ սկսելու է գիւղացիների ամենածանր աշխատանքը, երբ տանը մշակներ են հարկաւոր։ Գարնանը պանդխտութեան գնում են կամ մեր վերև վիշած լեռնայինները, որ Դեկոնսկու ասելով՝ իջնում են տափարակ գործելու, կամ երկրատեղ պանդխտութեան գնացողները։ Բագուում՝ գլխաւոր գործը նաֆթագործարաններում և նաֆթահորերում լինում է կամ աւելի լաւ է ասել, սկսում է եռալ գարունը գալուն պէս, երբ նաւագնացութիւնը բացւում է։ Այդ պատճառով էլ գիւղի աւելորդ ձեռքերը՝ տանը ձմեռը հանգստանալուց յետոյ՝ գարնանը գնում են Բագու։ Մշակներից նոքա, որոնք արդէն մի քանի տարուց Բագու են. ցանկանալով գիւղը դառնալու, բերել են տալիս իրանց փոխարէն իրանց եղբայրներին քաղաք, իսկ իրանք դառնում են կամ

գարնան, կամ չ'ուզենալով ամառուայ աշխատանքը թողնել. վերադառնում են աշնանը։ Այսպիսով մշակները, պանդուխտները, անդադար փոփոխւում են և այդ շարժումը ստանում է պարբերական բնաւորութիւն։

Մենք պարզ տեսանք, որ պանդխտութիւնը կապւած է աւելի մեծ խնդրի հետ, հողային ապահովութեան հետ։ Հետևաբար, քանի որ մեր հողային խնդիրները չեն վճռւած և դեռ կարգի չեն բերւած, մեր պանդըխտութեան խնդրի ծաւալը չի կարելի համարել բոլորովին որոշւած։

Նոյն խնդիրը կանգնած է և մեր առաջ. բայց ահա ինչ բնաորոշ կերպով։ Մեր երկիրը իւր այժմեան քանակութեան հողով 5 անգամ աւելի ժողովուրդ կարող է կերակրել։ Եթէ մեր ահագին անապատները, որ կան Մուղանի, Միլի, Սարդարաբադի, Ելիսաւետպոլի և ուրիշ անջուր տեղերում, ոռոգւէին արհեստական կերպով հանած առուներով. այնժամանակ այժմեան անյարմար հողերը կը դառնային ամէն տեսակ բոյս աճեցնելու ընդունակ հողեր՝ սկսած ցորենից, գարուց մինչև խաղողը. բամբակը և միւս շահաւէտ բոյսերը։ Մեր երկրում հող շատ կայ. բայց հողային խնդիրները դեռ չեն կանոնաւորւած։ Այդ հանգամանքները աչքի առաջ ունենալով՝ տէրութեական կալւածքների նախարարութիւնը ձեռք է առել հետազօտել մեր հողային խնդիրները և բարեփոխութիւնների ծրագիրներ կազմել։ Ուրեմն սակաւահողութեան առաջը կարելի կը լինէր առնել՝ գաղթեցնելով մեր գիւղացիների մի մասը դէպի մեր երկրի աւելի ազատ մասերը, եթէ անջուր տեղերով առուներ անցկացընէին և այդպիսով մեծ ասպարէզ բացւէր մեր դիւղատնտեսութեան զարգացման համար։

Սակաւահողութեան խնդրին այս որոշումը տալուց յետոյ, հետևեալ նկատողութիւնն ևս աւելացնենք։ Բացի սակաւահող գիւղացիներից, մեր գիւղերում կան և ա ն հ ո ղ գիւղացիներ։

Շարոպանի գաւառը հետազօտող Բախտաձէի ասելով [1]), ամբողջ գաւառում անհող գիւղացիների թիւը համարւում է 110 հոգի տղամարդ։ Անհողների շարքին չեն դցած այն գիւղացիները, որոնք թէկուզ մի փոքր, բայց ինչ և իցէ մի կտոր, հող ունեն։ Այդ աղքատների մեծ մասը ապօրինի զաւակներ են, որոնք անկարող են եղել մի որ և է ճանապարհով հող սեպհականացնել. դոքա ապրում են կամ օրավարձով [2]) կամ մուրացկանութեամբ։

Եթէ հաշւելու լինենք սոցա շարքում և այն սակաւահող գիւղացիներին, որոնց դրութիւնը նոյնն է, ինչ անհողներինը, այն ժամանակ վերջիններիս թիւը շատ կը մեծանայ, որովհետև կան այն տեսակ գիւղական

---

[1]) Матер. для изслѣд. экон. быта госуд. крест. Шаропан. уѣзда Кут: губ. изслѣд. Бахтадзе, т. V.

[2]) Գիւղամէջ և մարգանցէ (սև քարէ) հանքում.

հասարակութիւններ և այն էլ շատ բաղմամարդ, ինչպէս Խունեի և Լիչի գիւղերինը, որտեղ բնակիչները ուրիշի հողերով են ապրում, ուրտեղ 100 տղամարդից 61 հոգին անհող է։

Թէպէտ Զելինսկու ասելով՝ Զանգեզուրի գաւառում հողի չափշտակութիւններ և առհասարակ հողը թոյլի ձեռքից ուժեղի ձեռքը գցելը յաճախ պատահում է մահմեդական ազգաբնակութեան մէջ, որը այդ անում է կողմնակի ճանապարհով, բայց մեր մասնաւոր տեղեկութիւններից երևում է, որ մի չայտնի չափով և չայանի ժամանակամիջոցում այդ հանգամանքը ընդհանուր է բոլոր Զանգեզուր գաւառի համար, և հայերի մէջ էլ ոչ պակաս չափով, քան թուրքերի մէջ։

Շուշաւ և Զաբրայել գաւառի մասին խօսելով, Դեկոնսկին ասում է, թէ մի գիւղ ամենևին հող չունի, իսկ 7 գիւղ միայն արօտահողեր ունին։

Նախիջևան գաւառում կան մի քանի գիւղեր, որ կարելի է անհողների չարքին դասել։ Նիգիդէհ գիւղը, որ գտնւում է Վ. Ագուլիսից 4—5 վերստ հեռաւորութեան վերայ, զուրկ է վարելահողից, ունի քիչ արօտ, այն էլ քարքարոտ, ապրում է կամ հուս (կաղ) պոկելով սարի լանջերից և բերելով Ագուլիսում ծախելու, կամ թէ մշակ վարձելով։ Նոյն դրութեան մէջ են երկու աղքատ գիւղեր Քեօթան և Թիլիթ, որոնց բնակիչների աշխատանքը անտառից փայտ և ածուխ բերելն է չալակով և Ագուլիսում ծախելը։

Այսպիսով՝ մեր մինչև հիմայ լիշած պանդուխտների թի վերայ աւելանում են և անհող գիւղացի պանդուխտները։ Այստեղ ընթերցողի ուշքն ենք դարձնում պանդխտութեան հետևեալ ձևի վերայ, որը սովորական է թէ Վրաստանում և թէ մեզ մօտ Շիրակում։ Շարոպան գաւառից բացի այն, որ լիշատակում է Բախտաձէն կալւածատէրերից իջարով հող վեր առնելու մասին, ահագին բազմութիւն ճանապարհւում է Գօրայ գաւառը և այնտեղ չայտնի նշանակած պայմաններով հող է վեր առնում և մշակում։

Նոյնը կատարւում է և մեր Շիրակի մի քանի մասներում «մարաբաութիւն» անունով։ Բոզեօխուշցիք՝ Դիւզխարաբացիք, Գիւլլիբուլաղցիք, բաւականաչափ վարելահող չը գտնելով իրանց գիւղերում, գնում են Ղարսի նահանգի Հաջիփիրըմ, Մաքիւղ, Ղմին, Գիւլլիբուլախ և ուրիշ գիւղերի հողերը մշակելու։ Նոքա վարում են, ցանում, հնձում, կալսում և ստանում հունձի $^1/_4$, եթէ սերմը հողատիրոջն է և $^1/_3$-ը, եթէ սերմը ցանողինն է։ Փոքր Սարևարցիներից մի քանիսը 2 սոմար վարձով գնում են Ղարսի նահանգը հողագործութեան, ըստ որում հնձելը և կալսելը գիւղացու վերայ է. սոքա գնում են և Բորչալու. բայց քիչ թւով, որովհետև այնտեղ հիւանդանում են տենդով։ Շիրանջուղցիք և Սոգութլեցիք իրանց գութաններով գնում են մերձակայ Էջմիածնի գաւառի քուրդերի եաթաղները և պարապում են գլխաւորա-

պէս հողագործութիւնով Գեալթօ, Հակօ, Ղլիջեաթաղ ձմերոցներում, իսկ Սօգիւթլուն նոյնպէս և Սուսուզում ու Սաբունչիում։ Նոքա ցանում են, հնձում, կալսում և ստանում ղարմանի 1/2-ը և հատիկի 1/3-ը։ Ջաւնջա, Մաստարա, Արթիկ գիւղերի բնակիչները գնում են Զօրբա—քիւրդերի եաթաղը—կատարում են բոլոր գործերը և ստանում բերքի 1/3-ը՝ եթէ սերմը քրդինն է, և 3/4-ը՝ եթէ սերմը հայինն է, և այլն [1]... Այս վերջին տեսակի պանդխտութիւնը նշանաւոր է նորանով, որ գիւղացին, հեռանալով իւր գիւղից, նոյնպէս երկրագործ է մնում։ Նշանաւոր է և այն հանգամանքը, որ տանից գնում են պանդխտութեան ոչ միայն տղամարդը, ինչպէս այդ անում են միւս տեսակի պանդուխտները, այլ երբեմն ամբողջ ընտանիքը, կինը, երեխայքը և յետոյ կրկին գործերը աւարտելուց յետոյ վերադառնում են միասին։

Վերջապէս մեր պանդխտութեան խնդրի մէջ մեծ դեր են խաղում Պարսկաստանից եկած թուրք մշակները։ Գարունը սկսելուն պէս՝ մարտ, ապրիլ ամիսներում, հարիւրաւոր, խումբ խումբ, այդ պարսկաստանցիները գալիս են գործելու գիւղերում, նախ այգիներում, իսկ քիչ յետոյ արտերում հնձւոր դառնալով։ Բագու նահանգի հունձը գլխաւորապէս Պարսկաստանի մշակների ձեռքով է կատարւում։ Նոյնն է մասամբ Ելիսաւետպօլի և Երևանի նահանգներում [2]։ Նոքա աւելի աժան գործելով սաստիկ մրցում են տեղական հայ և թուրք մշակների հետ և յաղթում են։ Մեր երկրացոց մի մասը, չը դիմանալով այդ մրցման, գնում է քաղաքներ։

Վաճառանոցների և ճանապարհների հեռու կամ վատ լինելը նոյնպէս մեծ խոչնդոտ է տնտեսական զարգացման։ Ճանապարհների լաւացնելը, թէև ոչ շատ մեծ չափով, այնու ամենայնիւ գիւղացու դրութիւնը կարող է բարւոքել։ Երկաթուղու անցնելուց, թէպէտ երկրի արդիւնաբերութիւնը շատ կը մեծանայ, երկիրը կը հանգստանայ, բայց այդ կատարւում է ոչ միշտ յօգուտ ընդհանրութեան, այլ երբեմն մի փոքրամասնութեան։

Մեր երկրի պանդուխտների կեանքի հետ ծանօթանալու համար մեր եղած գրական աղբիւրները՝ մի երկու պատկերներ են և յօդւածներ։ Ցանկացողներին առաջարկում ենք թերթել Լէօի «Պանդուխտը», Ս. Մելիք Շահնազարեանի «Հայ գիւղացու սև օրը», «Մի փորձ մեր մշակների կեանքի ուսումնասիրութեան» «Մշակի» լրագրի մէջ և ուրիշ մանր մունր յօդւածներ՝ ցրւած մեր պարբերական հրատարակութիւնների մէջ։ Տարաբաղդաբար,

---

[1]) Շիրակի մասին այս մանրամասնութիւնները քաղել ենք Ալ. Քալանթարի տւած տեղեկութիւններից, որը հաւաքել է նա իւր հետազօտութիւնների ժամանակ։

[2]) Այս նահանգներից յետ են դառնում կամ Ջուղայի մօտով, եթէ Երևանեան նահանգումն են բանում, կամ Բագուի վերայով։ Ձմեռը մնացող քիչ է լինում։ Պարսկաստանցիներից պատահում են և քաղաքում բեռնակրութիւն անողներ,

պէտք է խոստովանած, որ այդ տեղեկութիւնները գլխաւորապէս վերաբերում են Բագուայ մշակներին, Բագուայ պանդուխտներին։ Ըստ որում դոքա ըստ մեծի մասին միակողմանի կազմուած են և վերաբերում են պանդխտութեան մութ և վնասակար կողմերին և քիչ են օգնում ամբողջ խնդրի պարզելուն։

Պանդուխտը, իսկապէս, վերադառնալով գիւղ, իւր հետ բերում է մեծ օժիտ վատ յատկութիւնների։ Քաղաքի կեանքը մեռցնում է գիւղացու պարզութիւնը, տակնուվրայ է անում գիւղացու բարոյական աշխարհահայեացքը, միանգամից նորան քանդելով և ոչնչացրածը առանց հիմնական բաներով փոխարինելով. Եթէ պանդուխտը բարոյապէս ստորանում է, նա դառնալով գիւղ՝ ազդում է նոյնպէս շրջապատողների վերայ փչացնող կերպով։ Քաղաքի ստոր խաւերի կեանքում՝ բարոյականութիւնից զուրկ՝ նա քայքայւում է ոչ միայն բարոյապէս, այլ և յաճախ հիւանդանում է շատ անգամ նոյն իսկ վեներական ախտով, որը և տարածում է գիւղում։ Ուժերի անկանոն վատնելուց, միակողմանի չարքաշ և միշտ զրկուած կեանքից, այդպիսով, փչանում է պանդուխտը և ֆիզիքապէս։ Բայց մտաւորապէս այդ չի կարելի ասել. գիւղացին մտաւորապէս շատ զարգանում է, նորա պահանջները մեծանում են և լայնանում. քաղաքը ազդում է գիւղացու ճաշակի և ոգու վերայ, գիւղացին աւելի համարձակ և ձեռնարկող է դառնում... Իսկ մտաւոր զարգացումը և լայն աշխարհայեացքը յաջող հանգամանքներում ծնում են և լաւ բարոյական հետևանքներ...

Պարզ է ուրեմն, որ պանդուխտը միայն վատ տարրեր չի մտցնում գիւղը, այլ և լաւ։ Ըստ մեծի մասին պանդխտութիւնը մեր գիւղացուն բարոյապէս և ֆիզիկապէս տկարացնում է, իսկ մտաւորապէս ուժեղացնում։ Պարզ հասկանալու համար առնենք օրինակներ, իբրև Ագուլիսը, Մեղրին, և այլն. որտեղ պանդխտութիւնը շատ վաղուց սկսուած է, և ուրիշ գիւղեր, որտեղ պանդխտութիւնը նոր է սկսել, կամ թոյլ է դեռ։

Վերջապէս գառնանք մեր յօդուածի վերջին կէտին, թէ ինչպէս են վերաբերւում մեզանում դէպ պանդխտութեան խնդիրը։

Մեր պատահած յօդուածներում և մտաւոր շրջանների խօսակցութիւններում, քիչ բացառութեամբ, լսում ենք այն տարածուած կարծիքը, թէ պանդխտութիւնը միանգամայն վնասակար շարժում է։ Առանց խոր պատճառների մէջ մտնելու առաջարկում են միջոցներ՝ քարոզով, գրքերով. կանգնեցնել նորան. բայց մենք վերը ասացինք, որ այդ տեսակ հնարներով չի կարելի կանգնեցնել, կամ աւելի լաւ է ասել չի կարելի վճռել տնտեսական մի մեծ խնդիր։ Չէ որ պանդխտութեան պատճառները շատ խոր են, և մինչև չը փոխւեն նորա պատճառները, չի փոխւիլ և երևոյթը։ Մեր առաջ բերած պատճառների մի քանիսի առաջը գուցէ կարելի կը լինէր առնել հասարակական կարծիք կազմելով, ինչպէս քաղաքացիների արտաքին փայլով շլանալն է, բայց դա ինքը ըստ ինքեան շատ աննշան չար-

ժառիթներից մէկն է և ժամանակով ինքն ըստ ինքեան էլ կը հարթի։ Խնդրի այս մասը, որչափ նա արժանի է ուշադրութեան, ի նկատի է առնուած թէ մեր հրապարակախօսութեան և թէ վիպագրութեան կողմից։

Ինչ վերաբերում է սակաւահողութեան, կամ անհողութեան՝ մենք ասացինք, որ գիւղացուն հողով ապահովելու հիմնական միջոցը ներքին գաղթականութիւն հաստատելն է։ Մենք սակաւահողութեան խնդիրը քննելուց՝ առաջ բերինք նաև նորան առաջ բերող պայմանների, պատճառների շարքում, հողատիրութեան անհաւասարութիւնը, հարստահարութիւնները վաչխառուների միջոցով, դաշտային մշակութեան անկատարութիւնը, հասարակական պարտականութիւնների անկանոնութիւնները, (կոռ, բէգար) և տեսանք, որ դոքա խոչընդոտ են տնտեսապէս ապահով կեանք վարելուն։ Ուրեմն եթէ գործադրելու լինենք զանազան միջոցներ, ինչպէս են՝ համայնական հողերի կանոնաւոր բաժանելը, գիւղական վարկ հիմնելը, ուսումնարանների և այլ միջոցներով գիւղատնտեսական գիտելիքներ տարածելը գիւղերում, լարմար երկրագործիքներ տարածելը, հարկերի, տուրքերի և հասարակական պարտականութիւնների կանոնաւորելը և թեթևացնելը, եղած դէմի հողերում ջրանցքներ անցկացնելը և այլ այս տեսակ միջոցները, որոնցով եղած հողը արդիւնաբերում է, իսկ ծախքերը պակասում են, կարող կը լինենք, մի առժամանակ, սակաւահողութեան առաջը առնել, հետևաբար և պանդխտական հոսանքը թուլացնել։ Ուրիշ միջոցներով կարելի է թուլացնել և մեր բերած միւս վնասող պատճառները, զորօրինակ, ճանապարհներ անցկացնելովը մեր երկրի զանազան մասերում, գիւղական շտեմարաններ հիմնելով և այլն։ Այդպիսի միջոցներով մի առժամանակ կը նուազեցնենք պանդխտութիւնը, թէև իհարկէ նորան չենք կանգնացնիլ։

Մեր պանդխտութեան խնդիրը կախուած է ոչ միայն հողային և այլ գիւղին վերաբերող խնդիրներից, այլ մեր քաղաքների կեանքի զարգանալուցը, կամ աւելի ընդհանուր կերպով ասենք՝ կախում ունի մեր երկրի ամբողջ տնտեսական խնդիրների ուղղութիւնից։ Մենք մեր աչքմանն ծրագրից պիտի հանենք պանդխտական շարժման իսպառ կանգնացնելու միտքը, քանի որ դա՝ չնորհիւ հիմնական հանգամանքների՝ անկարելի է։ Դուցէ հողային խնդիրները կանոնաւորելուց, վարկեր և շտեմարաններ հիմնելուց յետոյ՝ թուլանայ այդ շարժումը, սակայն դա երկար չի տևիլ և մի քանի ժամանակից յետոյ նորից, գուցէ աւելի մեծ ծաւալով կը սկսի... Պանդխտութիւնը, ինչպէս ասացինք, զանազան տեսակ հաց ճարելու խնդիրների մրցման հետևանք է։

Միայն սուգ կարդալով ոչինչ չենք անիլ, մեզ հարկաւոր է այժմ զբաղել պանդուխտների կեանքի, նոցա կենցաղի ուսումնասիրութիւնով, մտածել այն լարմարութիւնների և դիւրութիւնների մասին, որը պիտի տրւի պանդուխտին օտարութեան մէջ, որ նա քաղաքում կարողանայ առանց պատահարների և վնասների՝ թէ ֆիզիկականի և թէ բարոյականի կողմից՝ ապրել։